

**ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10**  
վիճակագրության պետական խորհրդի նիստի

24.08.2009թ.

ժ.11: 00

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ):

**Օրակարգի նախագծում՝ երեք հարց.**

1. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2007թ. մայիսի 18-ի թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Չեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

2. «ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրությունը հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001թ. մայիսի 29-ի թիվ 26 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Չեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

3. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2007թ. մայիսի 18-ի թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Չեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2007 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության արտաքին հատվածի վիճակագրության կատարելագործման հարցերի հանձնաժողովի մասին» թիվ 11-Ա որոշման 1-ին կետով ստեղծված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության արտաքին հատվածի վիճակագրության կատարելագործման հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գ.Սարգսյանի փոխարեն Հանձնաժողովում ընդգրկել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանին,

2. Կ.Կարապետյանի փոխարեն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրության վարչության Արտաքին հատվածի վիճակագրության բաժնի պետ (համաձայնությամբ) Մ. Բարսեղյանին,

3. Ռ.Հովհաննեսյանի փոխարեն՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանին (հանձնաժողովի քարտուղար):

4. «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)» բառերով:

5. «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ ֆինանսների նախարարություն» բառերով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. «ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրությունը հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001թ. մայիսի 29-ի թիվ 26 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

#### **Արտահայտվեցին՝**

Խորհրդի անդամներ Աղազարյանը, Պողոսյանը և Շաբոյանը, առաջարկեցին ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրություն տեքստի մեջ կատարել մի քանի փոփոխություններ, որոնք ընդունվեցին խորհրդի կողմից:

#### **Որոշեցին՝**

հաստատել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրությունը՝ համաձայն նոր լրացումների, և ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի մայիսի 29-ի «ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 26 արձանագրային որոշումը:

*/Անհատական/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ